

## ԳԼՈՒԽ Ի

Մուշեղի սիրտը թեև նեղացած էր Չաւենի իւր հրաւերը չընդունելուն վրայ, բայց ձայն չի հանեց, ինք կը սպասէր, որ գայ առաւօտուն, կը սպասէր նաեւ այդ շիրակացի երիտասարդին, որու նժոյգները յիշեց, բայց նա եւս չերեցաւ, ձիւնը երբեմն կ'ուզար, երբեմն կը դադրէր: Յամազասպ արդեօք կ'ուզա՞ր, կը հարցնէր ինքնիրեն, եւ ահա իւր պատուհաններէն դաշտին հիւսիսային կողմի ճամփան ճերմակ ձիւնին վրայ տեսաւ սեւութիւն մը որ երբեմն փայլ կառնուր. զինեալ մարդիկ կ'ուզային, ուրեմն Յամազասպ էր: Իսկ Չաւեն՝ կէսօր էր եւ չէր երեւար, մարդ դրկեց իջեւան, որ իմանան. վանահայրը պատասխանեց թէ՛ իւր հիւրերը առանց ձիւնին նայելու, որ բաւական առատութեամբ կ'ուզար, գիշերով թողէր Սուրբ Կարապետ գնացեր են:

Կասկածոտ մարդ՝ ինչպէս ամէն խորամանկ՝ չէր սիրէր Չաւեն առջի տեսած օրէն, իւր եղբօր Դաւթի ժամանակէն, եւ խեթիւ կը նայէր միշտ իրեն. ուստի հիմա, գիշերով անհետանալն յայդ շիրակացուն ինչ տեսակ-տեսակ կասկածներ տվին. խումբ մը թիկնապահաց հրամայեց, որ երթան Ս. Կարապետ եւ դարձնեն բերեն զամենքը քաղցրութեամբ կամ բռնութեամբ:

Նոյն միջոցին Յամազասպ իշխանը երեցաւ. ծանրագլուխ երիտասարդ մ'էր սա, ազնիւ, հանդարտ եւ քաղցր կերպ ունէր, իւր ժամանակին ոչ միայն ուսումնասէր, այլեւ ուսումնականը կը սեպուէր: Յայրենի հնաւանդ սովորութեանց հնազանդ եւ պատկառ, թեպէտ ականայ՝ շատ անգամ Մուշեղի տեղի եւ անիրաւ հրամանաց նաեւ կը հնազանդէր: Թեպէտ իւր այս հպատակութիւնը ոմանք շահասիրութեան կ'ուտային, վասնզի Մուշեղ ժառանգ չունէր եւ յամառ մարդ էր եար կարծեաց վրայ:

Սիրով ընդունեց զինք Մամիկոնեանց նախարարը, եւ բնականաբար առաջին հարցմունքն այն եղաւ թէ ի՞նչ կը պարունակէր Կամսարականաց կողմէն եկած նամակը, երբ իմացաւ թէ գրեթէ նոյն իմաստն ունէր

— Ի՞նչ պատասխան տւե՞իր,— հարցուց:

— Դեռ պատասխան չի տուի, վասնզի ուզեցի հարցնել՝ ինդիրն աւելի ձեզ պատկանելով, որ գլուխ էք Մամիկոնեանց տան: